

ԿԱՐԾԻՔ

Զինախոյզ Բալայանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ»

դոկտորական ատենախոսության մասին

Ատենախոսության գիտարդիական հնչեղությունը թեմայի մեծ ընդգրկումների մեջ է, ինչը ներկայացվել է ծավալուն Ներածականում և վեց գլուխների մեջ, որոնցում ներառվել են Արցախի հին մշակութային-գրավոր արժեքները, «գրականությունն ու պատմությունը, բնաշխարհագրական պատկերը, ստեղծագործ ոգին» (էջ 4): Հիմնավոր մանրամասներով ներկայացվում են գրական-հասարակական շարժումները, քաղաքական վայրիվերումները, դրանցում իրենց ընդգծված անհատականությամբ հայտնված գործիչները, նաև այդ ամենի մասին պատմագիտական, գրականագիտական և այլ քննություններ: Ներածության այս ծավալումներում անդրադարձ կա նաև թեմային առնչվող գրականությանը, բավականին մանրամասն՝ աշխատանքի վեց գլուխների բովանդակային գնահատումներին: Ինքը նշում է. «Ուսումնասիրության հիմնական ծրագիրը, նպատակն ու խնդիրներն են Արցախի գրականության բնութագրումն ու արժևորումը 19-րդ դարի հայ գրականության թեմատիկ, գաղափարական ընդհանուր տարածքի մեջ» (էջ 20. ընդգծ.- հեղ.)՝ յուրովի ստվերագծելով նաև անխուսափելի թերացումները:

Այս նկատառումներն են, փաստական հարուստ նյութի շրջանառումով, իրագործվում ատենախոսության բոլոր գլուխներում՝ պատմագիտական կամ գրականագիտական վերլուծումների որոշակի համամասնություններով՝ ցույց տալու, իր խոսքերով ասած՝ «գեղարվեստական և պատմական փաստերի հավանականությունն ու հավաստիությունը» (էջ 22): Որպես կանոն, գլուխները սկսվում են կատարելիքի համառոտ, երբեմն կրկնաբան տեղեկագրմամբ, ինչպես որ նույնը կրկնվում է գլուխների, երբեմն ենթագլուխների վերջում՝ ընդգծելու աշխատանքի նաև գրականագիտական շեշտադրումները: Ահա և առաջին գլխի

ասելիքը Րաֆֆու «Խամսայի մեկիքությունների» քննությունն է և այդ համադրության մեջ՝ գրողի թարգմանությամբ՝ Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպի վերլուծությունը: Պետականության գոյապահպան կարևորությունը, մեկիքությունների դերը, օտար ճնշումների մեջ նաև օտարահաճության, անմիաբանության դրսևորումները, ինքնության համար պայքարը, այս և այլ պատմագիտական դիտարկումների մեջցուցադրելով Զուբովի վեպի պատմականությունը, կարևոր է, որ դա ներկայացվում է կերպարների և կոնֆլիկտի համատեքստի մեջ, երբ «կոնֆլիկտը ոչ սովորական սիրավեպի շուրջ է հյուսվում, որից զարգանում ու մարմին են ստանում վիպական անցքերը» (էջ 33): Բնական է, որ վերլուծական եզրահանգումները («Զումշուղը կարողանում է հաղթահարել ներքին անազատությունը, բայց ընկնում է արտաքին անազատության մեջ», էջ 49. «Մեկիք Հուսեինի ռոմանտիկական կերպարում առկա են նաև կլասիցիստական հերոսին հատուկ դրսևորումներ», էջ 50.) վեպիկամ ուղեգրության բովանդակային-նկարագրական վերապատմումների մեջ են արվում: Կերպարների ու պատմական իրադարձությունների զուգահեռի մեջ նույն սկզբունքներով դիտարկելով նաև Րաֆֆու «Խամսայի մեկիքությունները»՝ հեղինակը կրկին իր կատարածի գրականագիտական շեշտադրումը հաստատելու համար գրում է. «Դժվարությամբ հաղթահարելով նյութի դիմադրությունը՝ մենք փորձեցինք նշանագիտական մեթոդի զուգահեռամբ քննությունը պատմագիտական դաշտից տեղափոխել գրականագիտական դաշտ» (էջ 79):

Նշանագիտական մեթոդի (սեմիոտիկայի կամ սեմիոլոգիայի) մասին հետազայում ևս մի շարք անգամներ նշվում են՝ միշտ հոգս ունենալով ցույց տալու կատարածի գրականագիտական բովանդակությունը: Հայտարարելով, որ Րաֆֆին օգտագործել է «թե պատմական, թե նշանագիտական մեթոդները» (էջ 85)՝ նա մասնավորապես դա հաստատում է կերպարային հատկանիշների դիպաշարային բնութագրումներով: Ասենք՝ Սև Աբովը «իբ նախնիքների քաջասիրության հետ ուներ և խելք» (էջ 87), «խորամանկության, անհավատարմության, ազգային հեղհեղուկ տիպական զծերով է

կերպավորված վրացի բարձր դասը»(էջ 98), կամ՝ «Մելիք Եսային ոչ միայն դպրասեր էր, այլև մեծ հայրենասեր,...ազգային ավանդների շարունակող»(էջ 100): Այսինքն՝ նշանագիտությունը, որ մի առարկայի նշանակում-բնութագրումն է որևէ այլ առարկայով, ընկալվել է որպես կերպարային հատկանիշի ցուցիչ, և սա հնարավոր հիմք է համարվել կատարածի գրականագիտական էությունը շեշտելու: Րաֆֆու գործի առիթով գեղարվեստական հատկանիշների առկայության հիմունք է դիտվումնաև տարբեր ժանրերի՝ «գեղարվեստական արձակի մանրապատում տեսակների»(էջ 95)՝ առակի, զրույցի,ասույթի, անեծքի ներառումը և ընդհանրապես ժողովրդական զրույցների, ավանդությունների դերը:

Իր նյութի երկու անհամաչափ բաղադրամասերի՝ պատմա-մշակութագաղափարական և գրական-գեղարվեստական, համամասնությունն ու երկրորդի կարևորությունը շեշտելու համար արված հեղինակային ընդմիջարկումները ավելի զգալի, բայց նաև անհրաժեշտ արդյունք ապահովող են դառնում ատենախոսության Երկրորդ գլխում, որտեղ քննվում է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» երկը, երբ կրկին ընդմիջարկվում է «վիպականություն, թե պատմականություն» (Երկրորդը այլ վերլուծական սկզբունք է նշանակում և գեղարվեստականության բաղադրամաս է), մինչ այժմ քննված գործերում «առկա են վիպապատմական տարրերը» (էջ 141) ձևակերպումով, խնդրի որոշակի հակասականությունը կամ բարդությունը հաղթահարվում է «պատումի կենսագրական եղանակով», ինչը «նաև որպես նամականի է պահպանում իր գրապատմական արժեքը»(էջ 148): Եվ կրկին վերլուծությունն արվում է պատմական փաստերի վերապրած անձնավորումների ու կերպարային հատկանիշների բացահայտումներով, յուրովի բացվում է «կերպարների համակարգը՝ քնարականության ու հերոսականության, առասպելականության շեշտադրումներով, արցախցիների տեսակի ամուր գծերով»(էջ 153): Րաֆֆու և Լեոյի՝ այս գործի պատմական հավաստիությունը մերժող քննադատական դիտումները և այդ առթիվ տրված բացատրությունները ամբողջացնում են վերլուծությունը: Որքան էլ կենսագրական հիմունքով աշուղ-բանաստեղծների՝ Սայաթ-Նովայի, Միսկին

Բուրջիի և այլոց կյանքի նոր տեղեկություններ կան և այդ համատեքստում՝ Միսկին Բուրջիի, Առստամ բեկի տաղերի ներառում գնահատականներ՝ որպես «հզոր հայրենապատումիխոսք»(էջ 206), որտեղ «նորից հնչում է հերոսամարտի արձագանքը» (էջ 210), միևնույն է, որոշակի վերամբարձ գրելաձևիմեջ իշխող է մնում պատմագիտական, որոշ դեպքերում երկարաբան վերլուծությունը:

Բնականորեն սպասելի է, որ գրականագիտական քննության բացարձակ տիրույթ պետք է լինի Երրորդ գլուխը, որը նվիրված է առաջադիր խնդրին առնչվող՝ Մուրացանի ստեղծագործություններին: Այստեղ էլ, նախապես հիշեցնելով «կենսագրական, պատմական, դիցաբանական» մեթոդներիմասին, ինչպես միշտ, տալով մեթոդների զարգացման սովերագիծը, նշում է, որ կենսագրական մեթոդով է գրվել Մուրացանի «Բաղդասար Մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւնը», որը, սակայն, նաև գեղարվեստական տարրեր է ներառում Արցախում և Սյունիքում Մուրացանի շրջագայության արդյունքում տեսած հուշարձանների ու հիշատակությունների գրառումների մեջ, ինչը ամբողջանում է Հասան-Ջալալյաններիօրինակով Արցախի հերոսական նկարագրի բազմապատկումով: Իհարկե, «կենսագրություն-վարք» ժանրային հատկանիշների հիշատակումը և ձևակերպումը, թե «կենսագրական մեթոդը արդի հայ գրականագիտության վերլուծական մեթոդների առաջատարներից է համարվում» (էջ 226), գրականագիտության շեշտադրումների նույն մտահոգությունն ունի, բայց պարզապես հիշեցնենք, որ վերլուծության կենսագրական մեթոդը ոչ այնքան կենսագրությունն է, որքան հեղինակիկենսագրական դրվագների, բնավորության ինչ-ինչ գծերի հիմքի վրա դիպաշարի, կերպարների որոշհատկանիշների զուգահեռ բացահայտումները(Օրինակ՝ Մուրացան-Ցլիկ Ամրամ):

Պետք է սպասել, որ այս հակասականությունը լուծվելու է «Ռուզան» դրամայի վերլուծության ժամանակ: Գրականագիտական քննության սահմանազատված հստակությունը թույլ է տալիս 13-րդ դարի պատմաշրջանի նշումներով ցույց տալ

դեպքերի ու կերպարների պատմականությունը, վերլուծել կերպարների հարաբերությունները, անձնականի ու ազգայինի համադրումը այդտեղ, կոնֆլիկտի զարգացումն ու լուծումը: Այս հնարավորություններով հեղինակը կնոջ կերպավորման մասին խոսքը հասցրել է Հումերոս, Միլտոն, Սեն Պիեռ, հայկական էպոս և «հայ մատենագիր- պատմիչների բույլը (Խորենացի, Եղիշե, Եզնիկ? -Վ.Ս., Անհաղթ?-Վ.Ս.) և այլ երևելիների ներկայությունը, որ նրա (Մուրացանի-Վ.Ս.) գեղագիտական համակարգի առանձնադիտումներից են և ցույց են տալիս նրա արվեստի կապը դասականի հետ» (էջ 238): Վերամբարձ-ներբողային վերաբերմունքը հասնում է մինչև իմպրեսիոնիզմ, որի «գծերը գրականության մեջ իրենց արտահայտությունն են գտել նատուրալիզմի (Է.Ջոլա), սիմվոլիզմի (Վերլեն, Մ.Մետերլինգ) պոետիկայում» (էջ 245): Եվ որքան էլ նշում է, թե՛ «Ռուզան»-ի «մեթոդաբանական, գեղագիտական վերլուծությունը գրական ուղղությունների... հարցում վերագնահատման շերտեր է պարունակում, ինչին և ուղղորդված է աշխատանքը» (էջ 245), միևնույն է, այդ վերագնահատումը հստակ արված չէ, և մնում է անունների ու եզրույթների ներառման տպավորությունը միայն:

Մուրացանի նկատմամբ հասկանալի ներբողային դիրքորոշումը, որ անցնում է գրողի առաջին ստեղծագործությանը, երբեմն խանգարում է նաև դրամայի պատմականության և կերպարների սթափ գնահատմանը: Ճիշտ ընկալելով մոնղոլական օրհասը և Արցախի դիմադրողական ուժի բարդությունները՝ բոլոր հերոսներին համարում է լիարյուն, միագծորեն տրամադրված է պաշտպանել գրողին, նաև Ռուզանի կերպարում, Լեոյի ճիշտ դիտարկմամբ, պատմականությունից հեռանալու առիթով նշել՝ «Լեոյից կրած ոչ արժանավոր խոսքերը» (էջ 244), մերժել նաև Ա.Տերտրյանի դիտարկումը, որ Ռուզանի կերպարի մեջ զաղափարախոսը ճնշում է կնոջ հոգեբանությանը՝ ի տարբերություն բույր Աննայի կերպարի հոգեբանական ամբողջացմանը:»

Դրամայի մասին ոչ շատ հաջող ձևակերպումից հետո («Մուրացանի պատմավիպական (պատմագեղարվեստական՝Վ.Ս) առաջին երկը, էջ 228») անհստակ նկատառումկա այն մասին, որ «Ռուզանին մենք Գանձակեցու մոտ՝*միայն* հանդիպում ենք» (էջ 228) հորը գերությունից ազատելու ճիգերի ժամանակ: Բարեբախտաբար հետո ճիշտ նկատվում է, որ Կ.Գանձակեցին գրում է, թե Արցախի Հասան Ջալալ իշխանը իր դասերը՝ Ռուզուբանին, կնության է տալիս մոնղոլ Բուրա Նուի գորավարին, սակայն դա էլ չի ապահովում թշնամու օրհասից, և Ռուզուբանի ճիգերը՝ փրկելու հորը գերությունից, արդյունք չեն տալիս: Ահա պատմական փաստի փոփոխությունն է առիթ դարձել Մուրացան-Լեո բանավեճի համար: Իսկ ատենախոսության հեղինակը Ռուզանին, պատմականության շեղումով, ռոմանտիկական անձնագոհության գաղափարակիր դարձնելու Մուրացանի դիրքորոշումը փորձում է հիմնավորել նրանով, որ «Ռուզուբան-Ռուզանը... իր երկրի ապահովության համար շատ ջանքեր *կլինին*՝ ներդրած» (էջ 231): «Կլինի՞»...

Մուրացանի «Խորհրդավոր միանձնուհի» վիպակի վերլուծությունը ընթանում է ճիշտ դիտարկումների, մեջ: Հստակ են ներկայացվում Մուրացանի աշխարհայացքում գյուղի, գյուղափրկիչ ծրագրի, անձնագոհության խնդիրները՝ «Ամուսնական սերը հայրենիքի սիրուն գոհելու գաղափարը» (էջ 264), այս ամենի՝ մեջ՝ կրկին որոշ պերճաբանությամբ՝ քույր Աննայի կերպարը, դրանց կապը Արցախի հետ՝ Շուշիի՝ որպես կրթության կենտրոնի և Մարիամյան օրիորդաց դպրոցի առկայության փաստերով և նրանով, որ Աննայի գործելու «ասպարեզը... Փոքր Սյունիքն է՝ Արցախը» (էջ 275):

Ատենախոսության Չորրորդ գլուխը ուղեգրություններում արցախյան անդրադարձների վերլուծությունն է: Այս դեպքում ևս ուղեգրության պատմա-աշխարհագրական բովանդակությունը և այն ներկայացնելը փորձ է արվում համադրել գեղարվեստական տարրերի հետ, որպիսին տեսնում է, օրինակ, Մեսրոպ Թադիադյանի «Ճանապարհորդություն ի Հայս» երկի մեջ ականատեսի աչքով՝ «օտարի

կործանարար տիրապետության, ... երկրի տնտեսական հարաբերությունների կասեցման դրդապատճառների» (էջ 276), նաև դրանց կերպարային դրսևորումների մեջ: Շատ ավելի հստակ շարադրանքի մեջ ցույց է տրվում թեմային առնչվող՝ Շուշիի դիրքի, «կլիմայի» պատկերավոր նկարագիրը, «արցախյան ընտանիքի, ... հոգևոր ու աշխարհիկ այրերի առաքինությունների» (էջ 281) «վիպական պարույրներով նկարագրումը» (էջ 283) և ցայտուն գեղարվեստականություն դրսևորող բարերար Թառումյանց եղբայրների մասին «վիպախառն ճշմարտացի պատմությունը» (էջ 279): Հարկ եղած դեպքում արվում են մանրամասն վերապատմումներ:

Այս, ինչպես և հաջորդ՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» և Հայկունու «Ուղեգրական ակնարկներ» երկերի պատմաճանաչողական և գեղարվեստական արտահայտչաձևերի մասին քննական և գրականագիտական վերլուծությունների համաչափության պահպանման մեջ ավելի ամբողջական է առաջադիր խնդրի կատարումը, երբ շեշտվում է, որ «հայրենաճանաչում»-ի ծրագիրը հիմք է դառնում «գեղարվեստական սքանչելի կտորների» (էջ 293):

Անհատական որոշակի դրսևորումներ են նկատվում ատենախոսության Հինգերորդ գլխում, որը վերնագրված է «Արցախը 19-րդ դարի պատմագեղարվեստական երկերում», և որտեղ քննվում է նաև Ալիշանի «Արցախ» պատմա-աշխարհագրական երկը՝ նահանգների, գետերի, լեռների, դրանց ծագումնաբանության, նաև բուսական աշխարհի, կոթողների, «հանճարի ցուանքները վարքերին դաջված հոգևոր և աշխարհիկ անձերի» (էջ 320)՝ տարբեր աղբյուրներից հավաքած տեղեկությունները, դրանց՝ նաև վիպական նկարագրությունները: Իսկ Մակար Բարխուդարյանի «արցախապատումի» գիտաճանաչողական հնչողությունը ամբողջացվում էն Արցախի բարբառով զրի առած մանրապատումների («Պըլը-Պորդի» և այլն) գեղարվեստական կատարումների ցուցադրումով:

Այս գլխի վերնագիրն ու պահանջը հիմնավորվում է Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպի վերլուծությամբ, որը, մեր կարծիքով, ատենախոսության հաջողված հատվածն է: Առանց գիտականության ճիգերի, պատմաշրջանի և դեպքերի ու կերպարների պատմականության վերլուծական ու նաև նկարագրական ցուցադրումներով ամբողջանում է առաջադիր թեմայի պահանջը, և հեղինակը կարիք չի զգացել նախորդ գլուխներում երբեմն հանդիպող մեթոդների, եզրույթների ու անունների՝ ոչ միշտ տեղին ներառումների: Գուցե միայն ցանկալի կլինեի մելիքի աղջկա՝ Գայանեի կերպարում ավելի խորքային ներկայացվեր պատմական հիմքի և լիբերալ-ազատամիտ գրողի կողմից կնոջ ազատության, իրավունքի և ուժի, նախաձեռնող լինելու խնդիրների հարաբերությունը:

Նույն կերպ ատենախոսության վերջին՝ Վեցերորդ գլխում Կոստանդին Մելիք Շահնազարյանի (Տմբլաչի Խաչանի) ֆելիետոնների «Զորոնա-Տմբլա» ժողովածուների քննությունը հիմնականում արվում է գրականագիտական չափավորությամբ, «զուռնա-տմբլան» դիտվում է որպես «պատկերավորման հիմնական միջոց» և «խորհրդանշան», որի կատարողական շրջանակներում արտահայտության երգիծական ձևերով ներառվում են տարբեր ժանրեր՝ «առակ, ասացվածք, դարձված, հանելուկ, անեկդոտ» (էջ 453) և այլն: Այս դիտարկումների մեջ, առանց որևէ ենթավերնագրի, ամփոփման կարգով «ուսումնասիրության վեց գլուխների» ասելիքն է համառոտում՝ կապված «հեղինակների գրական նախասիրությունների, տիպաբանության, ժանրերի տարբերակումների, գաղափարակառույցի, ոճերի, հեղինակային մոտեցումների,՝մամուլի օրգանների հետևողական ուղղվածության, ...նոր տիպի հերոսների կերտման,՝բարոյական արժեքների հարցերին» (էջ 453-454): Դրանից հետո ատենախոսության Եզրակացություններում կատարվում է բովանդակության ամբողջացում և ամփոփում:

Այսպիսով, ատենախոսության գնահատման ընթացքը ցույց է տալիս, որ թեմայի մեծ ընդգրկումը առաջ է բերում անխուսափելի թերություններ. գրականագիտական


վերլուծումների ցուցադրանքի, ոչ միշտ վերլուծության որոշակիության մեջ ներառված անունների ու եզրույթների անհստակության, պերճաբանության հակումի, ոճական և այլ անխուսափելի վրիպումների կողքին, այսպես թե այնպես, ատենախոսության հիմնական թերությունը կապվում է կառուցվածքի հետ: Վերլուծության հիմք կարելի էր դարձնել ժամանակագրությունը (Թադիադյան, Ալիշան, Րաֆֆի, Մուրացան...), կամ՝ ժանրային բաժանումը՝ գիտաճանաչողական ուսումնասիրություն, ուղեգրություն և կենսագրական հուշապատում, գեղարվեստական երկեր: Հակառակ դեպքում ինքնին հարց է առաջանում, թե ինչու՞պետք է «Արցախը 19-րդ դարի ուղեգրություններում» վերնագրված չորրորդ գլխում չներառվի Րաֆֆու գործը, կամ «Ռուզան» դրաման ինչու չի քննվում «Արցախը 19-րդ դարի պատմագեղարվեստական երկերում» վերնագրված հինգերորդ գլխում, որտեղ վերլուծվում է Ալիշանի գիտաճանաչողական ուսումնասիրությունը, և այլն: Ատենախոսը պետք է, հավանաբար, բացատրեր՝ աշխատանքի՝ իր ընդունած կառուցվածքի տրամաբանությունը:

Այս ամենով հանդերձ՝ նյութի մեծ ընդգրկումը և միջգիտական շառավիղները, հնարավորինս գրականագիտական վերլուծության սահմանների ապահովումը, հիմնականում ճիշտ եզրահանգումները, անշուշտ, թեմայի ընդգծված արդիականությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ ընդհանուր առմամբ Զինախիթա Բադալյանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» աշխատանքը բավարարում է դոկտորական ատենախոսությանն առաջադրվող պահանջները:

Պաշտոնական ընդդիմախոս բ.գ.դ.

պրոֆեսոր  Վ. Ն. ՍԱՖԱՐՅԱՆ

09. 12. 2021

 Վ. Ն. ՍԱՖԱՐՅԱՆ
10. 12. 2021 թ.